Դ. ՏԱՐԻ — ՁՈՐԵՔՇԱԲԹԻ 30 ՅՈՒՆՈՒԱՐ 1902 — Թիւ 387

R. P. Kalémearian, Mechitharistengasse W. 4 Vienne (Autriche)

ԱԺԱՆՈ՝ ԱԳՐՈՒԹԻՒՆ.
Պուլկարիոյ համար
Տարեկան 12 Ֆր
Վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար Տարեկան 15 »
Վեցամսեայ 8
Ամերիկայի համար
Տարեկան 3 տլր
Վեցամսեայ 1.50 »
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ
Տրանսիտման տողը առաջին երեսին համար 40ա. իսկ վերջին երեսի ար 20 սանթիմ ի. երեքեն աւելի անգամներու համար 20 Ա. զեղջ կրկնայ.

ՇԱՐԺՈՒՄ

Ղրկած ի. դրամ՝ դրեր ի Գրաստանեան Բան.

Редакция вавѣстникъ «Шаржумъ» Варна
Redaction du journal «Charjoum» Varna (Bulgarie)

Արտասահմանի ձեռքի
)(20 ՍԱՆԹԻՄ)(
Պուլկարիոյ համար ձեռքի
≍ 15 ՍԱՆԹԻՄ ≍

Վառնայի համար ձեռքի 10 սանթիմ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՁՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ՇԱՐԺՈՒՄԻ ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ՍԱՆԹԻԿ ՎՃԱՐԷ

Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

Գլխաւոր գործակալ

ՊՈՒԼԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆԷ ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ՍՕՖԻԱ ՔԱՂԱՔԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԵԱՆ ՏՈՄՍԵՐՈՒՆ.

Տոմսակ գնել փափագողները կրնան իրեն դիմել՝

Զար–Պորիս փողոց Վառնա

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

—o—

Մեր բաժանորդներէն մէկ մասը չը նայած մեր յայտարարութեանց, իրենց պարտքը չը ճանչցան, ու դեռ կը շարունակեն թերթ սառնալ.

Այդ անպարտաճանաչ մեծցորդներուն ժամանակ կուտանք մինչեւ փետրուար քսան. ու այնուհետեւ պիտի յայտարարենք անունները. իսկ Պուլկարիոյ մէջ չը վճարող բաժանորդներէն օրէնքի դիմելով պիտի գանձենք.

Շարժում միշտ ղրկուած է ով ուզած է. ոչ ոքի առանց ուզելու, մանաւանդ նոր խմբագրութեան միջոցին, թերթ չէ ղրկուած. եւ այդ ուղղներուն բոլոր նամակները պահուած են.

Բաժանորդները թող հասկնան որ խմբագրութիւնս թուղթի, մարքայի, տպարանի, գրաշարի ստակ կը վճարէ, և երբ իր բաժանորդները իրենց չնչին պարտքը չեն վճարեր, խմբագրութիւնը ահագին պարտքերու տակ կիյնայ, թէ ինք կը ՁԱՍուի, և թէ իրեն հետ դրամի գործ ունեցողները.

Դ. ՏԱՐԻՆ

Այս համարով լրանում է ՇԱՐԺՈՒՄԻ չորրորդ տարին.

«Շարժումի» գոյութեան նպատակն էր և է հարուածել ու հալածել այն ամէնը, ինչ որ կարող է խոչնդոտ հանդիսանալ մեր վերածնութեան գործին. չեշտենք որ վերածնութիւնը մենք գործ ենք ածում իր ամենալայն իմաստով. այն իմաստով, որի մէջ պարփակվում են հայ ժողովրդի ամենափայլուն իդէալները.

«Շարժումի» գոյութեան հիմնական նպատակն էր և է նաև քննադատել, խրախուսել ու պաշտպանել այն ամէն գործերը, ճիգերը, ձգտումները և տրամադրութիւնները, որոնց նպատակն է հայ ժողովրդի վերածնումը փութացնել.

Այս երկու նպատակին հասնելու և ծառայելու համար՝ «Շարժումը» պարտաւոր էր կատաղի կռիւ մղել հայ պահպանողականի, կեղծ դիւանագէտի, կեղծ յեղափոխականի, չեղոքի դէմ, ու նա մղեց այդ կռիւը անխնայ կերպով, հարուածեց անգթօրէն, առանց քաշվելու հարուածին են թակայ հղողների ունեցած դիրքից և զօրութիւնից.

Այդ պայքարի մէջ «Շարժումը» նշանաբան ունէր միայն հայրենիքի օգուտը ու անկեղծութիւնը. և իր բոլոր ճիգերը թափեց հաւատարիմ մնալու այդ նշանաբանին.

Անշուշտ այդ միայնգամայն քանդող և շինող պայքարի մէջ «Շարժումը» ունեցաւ և սխալ հարուածներ, սակայն մեղ մխիթարում է այս ճշմարտութիւնը — ով գործում է նա և կը սխալվի. բաւական է որ այդ սխալների գումարը իրենց ՁԱՍակար հետեւանքով շատ վար լինին պայքարի տուած դրական արդիւնքից.

Մենք գոհ սրտով վերջացնում ենք «Շարժումի» չորրորդ տարին, որովհետեւ համոզուած ենք թէ՝ մեր ուժերը ներածի չափ ծառայեցինք հայ ժողովրդին.

Մենք վստահութեամբ սկսում ենք և Ե. տարին. որովհետեւ ղեկավարվում ենք հաստատ սկզբունքներով. հայ ժողովրդի և մարդկային ամենալայն իդէալներով, որոնք ամենահաստատուն պաշտպանները ու յենարանները են ժողովրդական գործիչի համար.

ՎԱՍՊՕ

ՆՈՐ ՀԱՄԱԿՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Հայկական կոտորածներու արիւնոտ ընթացքին մէջ՝ միայն գերման ժողովուրդը անտարբեր մնաց դէպի մեր ժողովրդին քստմնեցուցիչ թշուառութիւնը.

Ամէն եւրոպական մեծ երկրի ժողովուրդ և կառավարութիւն քիչ թէ շատ ցնցուեցաւ, յուզուեցաւ, միայն Գերմանիա բոլորովին պաղարիւնութեամբ դիտեց մարդկային արիւնէ կազմուած գետերու հոսանքը.

Ճիշդ է, գերմաններու մէջ ալ գտնուեցան բարեպաշտ պատուելիներ, որոնք գոնէ դրամով օգնել ուզեցին սպաննուածներու անտէր մնացած որբիկներուն, բայց այս օգնութիւնը կը տրուէր իբր մուրացկաններու, առանց հայուն ճիգը ի նկատի առնելու.

Այսօր նոր հոսանք մը կսկսի և Գերմանիոյ մէջ. Տիկին Իլզէ Ֆրապան, ինչպէս կը տեսնանք կոչ մը կուղղէ իր հայրենակիցներուն. մանաւանդ գրագէտներուն, օրինակ առնելու ան նշանաւոր ֆրանսացիներէն, որոնք առանձին օրկան մը հիմնած են հայուն դատը պաշտպանելու համար.

Մեզի համար Իլզէ Ֆրապանի ասպարէզ գալը ևս առաւել մխիթարական է, որովհետեւ յարգելի Գերման-ուհին հայուն օգնելու կելլայ ոչ թէ զայն մեղքնալով, այլ յարգելով. այդ դժբաղդ և ստրկական ազգին մէջ հերոսութեան և խելքի անժխտելի փաստեր տեսնելով.

Իլզէ Ֆրապան—ԴՐՕՇԱԿի խմբագրութեան զգացմունքով լի նամակ մը ուղղելով, անոր մէջ կ'սքանչանայ հայ հերոսներուն և հերոսուհիներու վրայ. Այդ նամակէն մենք կը քաղենք հետեւեալ կտորները, որոնք Ֆրապանի դէպ ի հայը ունեցած համակրանքին խտացումը կը ներկայացնեն.

«Ես տեսած եմ հայ հերոսներու և նահատակներու պատկերներ. հերոսներ, որ չէին խոնարհեր, անձնատուր չէին ըլլար. չէին սարսափեր թրքական ֆանատիկոսութենէ և ոչ ալ բրդական վայրագութենէ, ու ատոնց փառաւոր կեանքի և պանծալի նահատակումը վկայ են հայ ուժին անընկճելիութեան, և հայկական ցեղին անջնջելիութեան...

Պատկերներ քիչ մը ուրիւթեան, և պատկերներ՝ ընտիր գեղեցկութեան.

«Հապա հայ կիներ՝ այդ քաջարի, եւրոպուհիներէս միանգամայն տարբեր չնորհալի սերունդը. անոնք են որ կատարած են գործեր, որոնց նկարագրութիւնը սրտեր կը բաբախեցնէ.

Ոչ մէկ բանաստեղծ մը չէր կրնար յղանալ վրէժխնդրութեան աւելի գեղեցիկ օրինակ մը, քան զայն, զոր կատարեց անարկիւղ եսիները, իր ձեռքովը դաշունահարելով իր պատիւը բռնաբարող Շէրիֆ աղան.

«Ու մինչ սիրտս կը կծկի այդքան ազնիւ կորսուած կեանքերու, այդչափ հպարտ թափուած արիւնի հանկէպ՝ սփոփիչ միտք մը կը փայլատակէ գլխուս մէջ և հաստատուն յոյս մը՝ թէ հայ ազգին վիճակը յուսահատական չէ, թէ անկարելի է յուսահատիլ ազգի մը ճակատագրի մասին, որ այդպիսի դէմքեր արտադրելու ընդունակ է.

«Միայն կէ՞նք. Զէ՞նք տուէք մէն մի հայու ձեռքը. ըլլայ այր մարդ, ըլլայ կին. ու երկար ժամանակ կաշկանդուած ժողովրդին ուժը, բոցավառուող կրակի մը պէս մինչև երկինք պիտի զարնէ ու տարերային ծանրութեամբ ջարդու փշուր պիտի ընէ իր դահիճները, իր հարստահարիչները.

. . . . . .

«Արդէն խորութիւններու մէջ կը որոտայ, արդէն կայծակնաշանթեր փայլատակած են. որոնք հայ հերոսներու և նահատակներու գործերն են, այրերու և կիներու. Ո՞վ գիտէ թէ երբ պի-

տի պայթի մեծ փոթորիկը . . . Թող ան ոչ մէկ հայ մը անպէտ չը-զանայ։»

Ահա այս վերջին յուսատու, ոգեւորիչ, Հայ հերոսներու հանդէպ ակնածանքով լի խօսքերով կը վերջացնէ իր նամակը յարգելի գերմանուհին։

***

ԿՈՉ

(Տիկին Իլզէ Ֆրապան, որ բանական յայտնի է Գերման գրագէտներու շրջանին մէջ և կարեւոր աշխատակիցներէն մին է «Տէօյչ Բունտշաու» ծանօթ ու տարածուած ամսագրին հրատարակած է հետեւեալ կոչը՝ ուղղուած գերման գրագէտներուն և հրապարակագիրներուն, որուն մէկ օրինակն ալ խմբագրութեանս ղրկուած է։

Նոյն հեղինակը զգացումնքով լի նամակ մը ևս ուղարկած է ԴՐՕՇԱԿի խմբագրութեան, որ արդէն տպուած է ԴՐՕՇԱԿի վերջին համարի մէջ սոյն կոչին հետ միասին)։

—

«Այն ժամանակ, երբ լօէրներ-ի հերոսական օրհասական կռիւը խորապէս ցնցում, յուզում է զեր մանական սրտերը և գերմանացիների արդարութեան զգացումը—դժբաղդ Հայաստանը արիւնոտում է աշխարհիս ամենապժգալի բռնապետութեան ճանկերում—և Գերմանիայի կամ Աւստրիայի մէջ մի ձայն չէ բարձրանում, պարզ մարդկայնութեան, արդարութեան մի ճիչ՝ յօգուտ բռնութեամբ զինաթափ արուած և ապա խողխողուած հայ ժողովրդի։

«Եւ սակայն մեր պարտքն է, մեր գերմանական գրողներիս մարդկային պարտականութիւնն է՝ շարունակ յիշեցնել, որ հայոց հարցը Բէրլինի դաշնագրով մտել է միջազգային իրաւունքի մէջ և որ Հայաստանը եւրոպական պետութիւններից հովանաւորութիւն չը պէտք է աղերսէ, այլ պիտի պահանջէ։ Բայց գերմանական մամուլը այդ հարցում հեղգ է, եթէ ոչ բոլորովին համր։ Մինչդեռ Ֆրանսիայում արդէն մի տարուց ի վեր՝ Ֆիգարէ, Անատոլ Ֆրանսի, Պրեսսանսէի, Ալէմանսօյի, Ժօռէսի և Դը Ռօբերտիի խմբագրութեան ներքոյ հրատարակւում է «Բրօ Արմէնիա» թերթը, որի կոչումն է՝ արդարութիւն ու օգնութիւն ապաղակել և հաղորդել ցանկացողներին, թէ որպիսի արեան տառերով է գրուած Հայաստանի պատմութիւնը ժողովրդների Դրքի մէջ—հինգ տարուց ի վեր Աբդիւլ Համիդը չարդել, խեղդել և կամ թիւրքական սոսկալի բանտերում սով ու տանջանքներով սպանել է աւել 300,000 հայ—Գերմանիայում ամենաշատը տեսնում ենք միայն կարճ, սակաւ տողերից բաղկացած տեղեկութիւններ անվերջանալի կոտորածների մասին, տեղեկութիւններ՝ առանց տաքութեան ու համակրութեան, որոնք աւելի վատ են, քան ոչինչը։

«Յարգելի կոլլեգներ և կոլլեգուհիներ, թօթափե՛նք գերմանական աշխարհի համար անպատուաբեր այդ հեղգութիւնը։ Գիտակցենք, որ մենք գրողներս ենք, որ պիտի առաջ տանենք իրաւունքի և մարդկայնութեան գաղափարը։ Խեղդեցէ՛ք ձեր ըմբոստացման թափով անարժան ձայնը՝ «չահ չունինք դրանից»։ Յիշեցէ՛ք, որ մեծ պետութիւնները և ժողովուրդներն իսկ իրենց անշարժութեամբ մեղսակից են այն ահռելի գազանութիւնների մէջ, որոնք ամէն օր կատարւում են Հայաստանում։ Ցեղակցէ՛ք մարդկային իրաւունքների այն բռնաբարումների մասին, որ անպատիժ կերպով գործւում են հայ ժողովրդի նկատմամբ և սկսեցէք մի ուժեղ պրոպագանդ նախ Գերմանիայում ու Աւստրիայում։ Մենք պէտք է միջամտութիւն առաջ բերենք։ Հնչեցրէ՛ք միեւնոյն կոչը, որ արդէն հնչւում է Ֆրանսիայում. «Բրօ Արմէնիա»։

Իլզէ Ֆ՝Ապան

Համբուրգ

—()[]—

ՄԵՐ ԴԻՒԱՆԱԳԷՏՆԵՐՈՒՆ

—()—

Այժմ կասկածի տեղիք չի կայ որ Ռուսիոյ ամենավատագոյն Ախոյեանը Տաճկաստանի մէջ Գերմանիա կը հանդիսանայ։

Բաղդատի երկաթուղային գծի շինութիւնը-Ռուսիոյ համար շատ անմարելի բան մը եղաւ, սուր դանակի մը պէս ցըցուեցաւ անոր սրտին մէջ. թէեւ Ռուսիոյ ելեւմտից նախարարը, Վիթէ, կաշխատի ապացուցանել թէ՝ այդ գծին շինութիւնը այնքան ալ վնասակար չը պիտի ըլլար Ռուսիոյ ծրագիրներուն համար։

Ան Հայերուն համար, որոնք գիւանագիտութեան չափէն աւելի մեծ կարեւորութիւն կուտան, և սն հայերուն համար որոնք նպատակ դրած են հայերուս դատին ինպատաս Եւրոպայի ժողովուրդներու մէջ կարծիք և համակրութիւն ստեղծել՝ նոր ասպարէզ մը կը բացուի գործելու համար։ Ա՛ա ասպարէզը Գերմանիան է. Ռուսիոյ հակակշիռը. Փորձ Ա՛ռիոյ մէջ։

Մեր կարծիքով Գերմանիոյ համակրութիւնը և աջակցութիւնը ձեռք բերելը աւելի մեծ նշանակութիւնը պիտի ունենայ քան Ֆրանսայինը, որ Ռուսիոյ չսլաքին պէս կը պարէ։

Գերմանացիք շահամոլ ժողովուրդ մը են, ինչպէս ներկայիս ամեն եւրոպական ժողովուրդ, սակայն երբ Գերմանիա համոզուի թէ՝ Հայուն վիճակը բարելաւելով, իր առեւտրական եւ այլն շահերը չը պիտի վնասուին. կարելի է որ զմեզ քիչ մը հովանաւորէ. երբ և իր շահերն կը պահանջեն։

Հիմա, ինչպէս կը տեսնուի, Գերմանիոյ մէջ Հայերուս ի նպաստ ձայն պարտի մեծ փոթորիկը . . . Թող ան ոչ մէկ հայ մը անպէտ չը-զանայ։»

Ահա այս վերջին յուսատու, ոգեւորիչ, Հայ հերոսներու հանդէպ ակնածանքով լի խօսքերով կը վերջացնէ իր նամակը յարգելի գերմանուհին։

***

ԿՈՉ

(Տիկին Իլզէ Ֆրապան, որ բանական յայտնի է Գերման գրագէտներու շրջանին մէջ և կարեւոր աշխատակիցներէն մին է «Տէօյչ Բունտշաու» ծանօթ ու տարածուած ամսագրին հրատարակած է հետեւեալ կոչը՝ ուղղուած գերման գրագէտներուն և հրապարակագիրներուն, որուն մէկ օրինակն ալ խմբագրութեանս ղրկուած է։

Նոյն հեղինակը զգացումնքով լի նամակ մը ևս ուղարկած է ԴՐՕՇԱԿի խմբագրութեան, որ արդէն տպուած է ԴՐՕՇԱԿի վերջին համարի մէջ սոյն կոչին հետ միասին)։

—

«Այն ժամանակ, երբ լօէրներ-ի հերոսական օրհասական կռիւը խորապէս ցնցում, յուզում է զեր մանական սրտերը և գերմանացիների արդարութեան զգացումը—դժբաղդ Հայաստանը արիւնոտում է աշխարհիս ամենապժգալի բռնապետութեան ճանկերում—և Գերմանիայի կամ Աւստրիայի մէջ մի ձայն չէ բարձրանում, պարզ մարդկայնութեան, արդարութեան մի ճիչ՝ յօգուտ բռնութեամբ զինաթափ արուած և ապա խողխողուած հայ ժողովրդի։

«Եւ սակայն մեր պարտքն է, մեր գերմանական գրողներիս մարդկային պարտականութիւնն է՝ շարունակ յիշեցնել, որ հայոց հարցը Բէրլինի դաշնագրով մտել է միջազգային իրաւունքի մէջ և որ Հայաստանը եւրոպական պետութիւններից հովանաւորութիւն չը պէտք է աղերսէ, այլ պիտի պահանջէ։ Բայց գերմանական մամուլը այդ հարցում հեղգ է, եթէ ոչ բոլորովին համր։ Մինչդեռ Ֆրանսիայում արդէն մի տարուց ի վեր՝ Ֆիգարէ, Անատոլ Ֆրանսի, Պրեսսանսէի, Ալէմանսօյի, Ժօռէսի և Դը Ռօբերտիի խմբագրութեան ներքոյ հրատարակւում է «Բրօ Արմէնիա» թերթը, որի կոչումն է՝ արդարութիւն ու օգնութիւն ապաղակել և հաղորդել ցանկացողներին, թէ որպիսի արեան տառերով է գրուած Հայաստանի պատմութիւնը ժողովրդների Դրքի մէջ—հինգ տարուց ի վեր Աբդիւլ Համիդը չարդել, խեղդել և կամ թիւրքական սոսկալի բանտերում սով ու տանջանքներով սպանել է աւել 300,000 հայ—Գերմանիայում ամենաշատը տեսնում ենք միայն կարճ, սակաւ տողերից բաղկացած տեղեկութիւններ անվերջանալի կոտորածների մասին, տեղեկութիւններ՝ առանց տաքութեան ու համակրութեան, որոնք աւելի վատ են, քան ոչինչը։

«Յարգելի կոլլեգներ և կոլլեգուհիներ, թօթափե՛նք գերմանական աշխարհի համար անպատուաբեր այդ հեղգութիւնը։ Գիտակցենք, որ մենք գրողներս ենք, որ պիտի առաջ տանենք իրաւունքի և մարդկայնութեան գաղափարը։ Խեղդեցէ՛ք ձեր ըմբոստացման թափով անարժան ձայնը՝ «չահ չունինք դրանից»։ Յիշեցէ՛ք, որ մեծ պետութիւնները և ժողովուրդներն իսկ իրենց անշարժութեամբ մեղսակից են այն ահռելի գազանութիւնների մէջ, որոնք ամէն օր կատարւում են Հայաստանում։ Ցեղակցէ՛ք մարդկային իրաւունքների այն բռնաբարումների մասին, որ անպատիժ կերպով գործւում են հայ ժողովրդի նկատմամբ և սկսեցէք մի ուժեղ պրոպագանդ նախ Գերմանիայում ու Աւստրիայում։ Մենք պէտք է միջամտութիւն առաջ բերենք։ Հնչեցրէ՛ք միեւնոյն կոչը, որ արդէն հնչւում է Ֆրանսիայում. «Բրօ Արմէնիա»։

Իլզէ Ֆ՝Ապան

Համբուրգ

—()[]—

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆՀԱՍԿԱՆԱԼԻՆ

ՄԱՍ II

Վահէն երկար բարձ մոռնալուց յետոյ, աւելի անհաւատալի դարձաւ, նա ժամադրութիւն ունէր, լճի ափին, Զարուհու հետ, որը պէտք է դայ իր ծնողների պատասխանը յայտնելու։ Դեռ կէս ժամ էլ կար նշանակված ժամը հասնելուն, բայց նա որոշեց աւելի շուտով գնալ ժամադրավայրը։ Սենեակից դուրս գալով գնաց լճի ափը. նստեց այն տեղ, ուր բաւական մեծ ճեղքվածքից ջուրը թափվում է դէպի ցած և գնում Ներսէսեան անտառը։ Այդ օրը ջրանցքը բաց ված էր ջրվէժի նման ջուրը վար էր իջնում և իր աղմուկով ու շառաչով խանգարում երեկոյեան լռութիւնը։ Լճի ափին մարդ չը կար. Վահէն արուեստական ջրվէժի գլխին նստած՝ կը կրկնէ մտածումների մէջ ընկղմվեց. նրա միտքն ընկաւ ձեմարանի ուսուցչի պատմածները էջմիածնի մասին. Էջմիածնի, որ Հայ ժողովրդի մրոկ իշխանութիւնն է, և միակ հսկող հայ կրթութեան ու բարոյականութեան։

—Վա՛յ մեզ չոչնչաց նա. բախտը մեզ դրկել է ամեն բանից իբրեւ ժողովուրդ մենք ունենք միայն եկեղեցին, ապաւինել ենք միայն նրան, մեր ազգայնութիւնը պահպանելու բոլոր ազգակները եկեղեցու պաշտօնեաների ձեռքում է գտնվում. և նրանց գլուխները-անպէտք են, անընդունակ. ոչ միայն անպէտք, այլ և վնասակար։

Ասում են որ մինչեւ օրս եկեղեցու շնորհիւ է միայն որ Հայ ժողովուրդը պահպանել է իր գոյութիւնը. թերեւս այդ ճիշդ է, բայց այսուհետեւ էլ եկեղեցականների շնորհիւ է որ մենք պէտք է կորչենք. եթէ միայն մեր ապաւէնը նրանց ընդունենք, եթէ մեր ամբողջ յոյսերը նրանց վրայ դնենք։ Չէ, պէտք է շտապել, պէտք է ամեն ճիգ թափել, շուտով հայի ինքնուրոյնութիւնը ձեռք ձգել և իր գոյութեան պահպանումի պաշտօնը իրեն՝ ժողովրդին յանձնել։ Ժամանակները փոխվել են. կրօնական առանձնութիւնը հիմա ժողովրդին փրկել չի կարող։ Հիմա, զէնքով վառոդով, թնդանօթներով է պահպանվում ազգայնութիւնը և այդ միջոցները պէտք է ունենալ դիմանալու համար։

Մինչ Վահէն այդ խոհերի մէջ խորասուզված, ջրվէժի առոյգ շառաչին էր ունկնդրում-նա իր ուսի վրայ մի թեթեւ հարուած զգաց ու ետ դառնալով՝ Զարուհուն տեսաւ կանգնած։ տեղիցը վեր թռաւ, և Զարուհու ձեռքը սեղմելով ասեց.

—Է, ի՞նչ լուր Զարուհի. յուսով եմ որ ուրախ լուրեւ բերել։

—Թէ ուրախ և թէ տխուր։ Ամեն բան վերջացաւ. մայրս չի հաւանվում ինձ Պարսկաստան թողնել բայց ես յայտարարեցի որ իմ որոշումը վերջնական է. դրանից յետոյ մայրս յայտարարեց որ ես այլեւս իր աղջիկը չեմ, և ուր ուզում եմ կարող եմ գնալ. ահա ես էլ եկայ քեզ մօտ. որովհետեւ ուրիշ տեղ չունեմ գնալու։ Վաղը ճամբա կը նկնենք։ Հիմա այլեւս ոչինչ և ոչ ոք կարող է ինձ քեզնից բաժանել։

Վահէն գրկեց Զարուհու գլուխը, առաջին հմբոյրը դրոշմեց նրա կուսական շրթունքներին. ու, ձեռքից բռնելով, ասեց.

—Գնանք հոգիս, գնանք քեզ տանեմ մի բարեկամի տուն, որովհետեւ ինձ մօտ. Ղազարապատում չեմ կարող մնալ։

—Հա, գնանք, ուր ուզում ես գնանք։ Վերջապէս ազատ մարդ եմ, քեզ հետ։ Գնանք թէ ապրելու և թէ գործելու. միշտ միասին։

—Այո գնանք, Զարուհի, բայց, հոգիս, դժուար է այն ճանապարհը որով դու ուզում ես գնալ. և այնպիսի մի մարդի հետ, որը իր գլխից ձեռք քաշած նետվում է մի փոթորկալից գործունէութեան մէջ։

—Թող լինի։ Այդ փոթորկալից գործունէութիւնը մեր ժողովրդի փրկութեան համար է. նրա դարեւոր ստրկութեան վերջ տալու համար է. մեր ժողովուրդը թոյլ է. փոքրաթիւ է. նրա սմէն մի անդամը, թէ այր և թէ կին պէտք է ժամանակին այդ փրկութեան գործին։ Տես ինչ լռութիւն է տիրում. տես աստղերը որ չափ չքեղ են փայլում։ Լսում ե՞ս և ծառերի շշուկը։ դրանք բոլորն էլ մեզ են լսում. իմ խօսքերի վկաները են։ Դու հայ ես, սիրելիս, դժբախտ ստրուկ ժողովրդի զաւակ. և ուզում ես այդ ժողովրդին բախտաւորացնող միակ գործին նուիրվել։

Ես էլ հայհոյի եմ, ժողովրդի այն մասից, որը դարերով ստրուկներ է ծնել միայն. ես էլ նուիրվում եմ այդ գործին. դու չը կարծես որ միայն քու սէրն է որ սոսիպում է ինձ քեզ հետ միանալ, քեզ հետ գալ. ո՛չ ինձ մղում են և հայրենիքի սէրը ու ստրուկներ աշխարհը բերելու ցանկութիւնը։ Ինձ թւում է որ ես կսկսեմ քեզ ատել, երբ իմանամ թէ դու թուլացել ես քու ընտրած ճանապարհի։ էջ, ետ ես մնացել, կանգ ես առել։

—Ո՛չ, Զարուհի, ես չեմ թուլանայ, միայն ես վախենում եմ որ քո սէրը, քո կեանքը վտանգի չը ենթարկելու զգացումնքները աւելի զօրեղ լինին, և ինձ ստիպեն ամեն մի քայլս վարանումով առնել. ես վախենում եմ որ իմ եռանդը երկուսի բաժնվի. մի մասը քեզ զոհվի, միւսը հայրենիքին ես վախենում եմ որ ոչ քեզ կարողանում սիրել, ինչպէս պէտք է սիրել. և ոչ հայրենիքը։

—Սխալ ես դատում, այդպէս կարող է լինել այն ժամանակ, երբ ես քեզնից աւելին պահանջեմ. ոչ, ես քեզնից չեմ գողանայ այն, ինչ որ հայրենիքին է պատկանում. և նրա վրա կաւելցնեմ և իմ ունեցածը։

Եւ իմ առածներին իբր երաշխաւորութիւն, բեր քու աչքերը համբուրեմ, սիրելի Վահէն։

(Շարունակելի

ներ կը բարձրանան, ու հոսանք մը կատեղծուի։ Մեր դիւանագէտները աշխատելու են առ հոսանքէն և արագադրութենէն օգտուիլ։

Երբ մենք կրցանք եւրոպական բոլոր մեծ ժողովուրդներու համակրութիւնը գրաւել, որը միայն գիւանագիտութեամբ չէ որ պիտի ըլլայ, այլ և մեր դատին համար զոհ ու արիւն տալով քաջաբար, ոչ ոչխարի պէս, այն ժամանակ միայն Ռուսիոյ հակառակութիւնը։ Վերջ մը չը պիտի կրնայ հասցնել մեզի։

Հիլդ

ՆԱՄԱՅ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

— o —

. . . Խմբագիր

Ձեր թերթի յունուար 12ի մէջ տեսութիւն կընէք ի փքրիկ պրոշիւրիս, «Թող չը մեղադրեն»ին վրայ, որու մասին պէտք կը համարիմ հետեւեալ դիտողութիւնս ներկայացնել ձեզ խնդրելով որ հրատարակէք Շարժումի յառաջիկայ թիւերէն մէկով։ Բայց նախ քան այս թոյլ տուէք ինծի ձեզ յայտնել այն անկողմնակալութիւնը զոր Շարժում ընդունեց այդ տետրակիս հանդէպ։ Արտասահմանի հայ մամուլը «Զաքարիայի պապանձումով» լուեց, բառ մը չը գտաւ ըսելու և կարծեց որ լռելով մոռցնել պիտի տար։

Յօդուածագիրը Պ. *** այս տողերը նուիրած է պրոշիւրիս.

« . . . Արսէնը կը մեղադրէ բոլոր այն անձերը որոնք Զօպանեանը մրոտելու և տապալելու ձգտած են։ Մեղադրանքները շատ ծանր են և մեզի շատ գէշ կը ներկայացնեն բարիզաբնակ քանի մը ազգայիններ... տակայն (այդ պրոշիւրը) նշանակութիւն պիտի ունենայ եթէ ճշդուին Պ. Արսէնի մեղադրանքները։»

Արդ, յարգելի խմբագիր, ինչպէս կուզէ՞ք ճշդեմ այդ պրոշիւրի ամեն մէկ իրողութիւնը, ես զանոնք թուեցի «ամենայն խղճմտանքով, համառօտելով» և պրոշիւրիս վերջի երեսներու մէջ կը հրաւիրէի այն անձեր «որ եթէ գիրենք վիրաւորուած կզգային ինձի դիմէին բացատրութիւն պահանջելու»։ Ամիս մըն է, բայց ոչ մէկ մարդ քաջութիւն չունեցաւ երեւան ելլալ։ ոչ մէկ ադամ-որդի չըվստահեցաւ մատը դնել պրոշիւրիս ո և է մէկ տողի, ո և է մէկ բառի վրայ ու անոր մասին դիտողութիւն մը ընել։ Ես քանի մը օր առաջ «Շարժում»ի խմբագրութեան ղրկած մասնաւոր նամակիս մէջ տարբերուած էի պրոշիւրիս մէկ քանի տողերը և թէ այդ պրոշիւրի մէջ գործածուած ամեն մէկ նախադասութիւն, ամեն մէկ բառ ուղղութեան կէտեր իրենց խորին ու սարսռեցուցիչ իմաստը ունին։ Թող գիտնան վատերը որ որքան կատեմ ստութիւնը, վատութիւնը, նախանձոտները, սրիկաները, այնքան ալ կը պատրաստուիմ նախապէս երբ առնոց հետ գործ ունենալուն պէտք տեսնամ, անոնց դիմակը պատռելու ելլեմ։ ԿԸ ԿՐԿՆԵՄ հոսանգամ մըն ալ—ես իմ ձեռքիս տակը ունիմ զօրեղ ու ուժեղ, «բարոյական» և «նիւթական փաստեր. և կրթնած ճշմարտութեան ու անկեղծութեան վրայ կրնամ լուսաբան հանել իրողութիւններ որոնք տխուր և գարշելի պիտի դարձնեն բարիզաբնակ մէկ քանի հայերու դէմքեր։ Այն անձերը որ կը մեղադրէի երեւան չեկան, չուզեցին յայտնուիլ, ու կարծեցին թէ լռելով պիտի մոռցնել տային իմ հրապարակի վրայ դրած իրողութիւններս, և կամ հակառակը չը խօսելով պիտի կասկածելի դարձնէին անոնց ճշմարտութիւնը։ իրու է թէ խնդիր մը չծեծուելով չի ճշդուիր. բայց այդ պարոնները թող յոյս չունենան ատոր, այդ փախուստի համրան զիրենք ապատանարանը չի հասցներ. ես այդ իրողութիւնները հրապարակեցի, իսկ իրենք՝ քաջութիւն չունեցան անոնց դէմ դիտողութիւն մը ընել, ուրեմն կը նշանակէ՝ որ պարտուեցան կամ ընդունեցին անոնց ճշդութիւններ ըլլալը։

Թող գիտնան, կը կրկնեմ. զիրենք հանդիսաւ պիտի չը թողում, հրատարակած իրողութիւնները ձեռքիս տակ ունեցած իրողութիւններուն մէկ անենչան մասն է, և այդ իրողութեանց ամբողջութեամբ հրատարակումը վատերու, չարագործներու և սրիկաներու «Բարոյական մահը» պիտի ըլլայ, կուզեն թող լռեն։

Արդ, այսու կը հրաւիրեմ Պ. ***, Շարժումի աշխատակիցը, որ հաճի ինքն ալ իր կողմէն հրաւիրել այն ձերը որոնց մեղադրած եմ պրոշիւրիս մէջ, որպէսզի գան ու յայտնեն թէ արդեօք դիտողութիւն մը ունի՞ն անոնց իրողութիւններ և ճշմարտութիւններ ըլլալուն հակառակ։

Կըսպասեմ այն քաջասիրտ մարդուն որ հրապարակ ելնէ ու դիտողութիւն մը ներկայացնէ. նոյն իսկ իմ բրոշիւրիս ո և է ածականին; ո և է որակականին հանդէպ իսկ. չեմ ըսեր նախադասութիւններու և պարբերութիւններու։

Կըսպասեմ և եթէ իրենք լռեն, ես նորէն պիտի սկսիմ...

Արսեն

Բարիզ փետր. 5

ՓԱՍՏ ՄԸ ԵՒՍ

— o —

Հռչակաւոր ազգասէր Իսկէնտէր, որուն ազգաւիրական ըզգացմունքներուն մաքրութեան մէջ առաջին անգամ «Շարժում» հրապարակաւ կասկած յայտնեց, անոր պատուոյ ատեանի կոչը հրատարակուած միջոցին, այս անգամ ինք ճկաւ ապացուցանելու որ մաքուր հայրենասէր մը ըլլալէ շատ հեռի է։

Անցեալ օրեր, Բարիզի մէջ, ֆրանսական դատարանի առջեւ տեսնուեցաւ այդ մութ պարոնին դատը, զոր բացած էր Գալբաքճեանի դէմ։

Դատի միջոցին, Իսկէնտէրի փաստաբանը, Գալբաքճեանի վարկը կոտրելու և զայն անպատիւ ներկայացնելու տենչ ունենալով, զայն հայ յեղափոխական մը կը ներկայացնէ, որով ցուցէ հասկցնել թէ Գալբաքճեանի դէշ և անազնիւ ըլլալը ապացուցելու համար՝ բաւ է գիտնալ որ ան հայ յեղափոխական մըն է։

Ու հայրենասէր, հայ յեղափոխականներու մութեան համար աշխատող—Իսկէնտէրը, չի ամչընար, չի խպնիր իր ազգին յեղափոխութիւնը և յեղափոխականները ամենասարսափելի արհամարանքի մը մատնել տալ։

Իսկէնտէրը իրաւունք ունէր իր պատիւը պաշտպանել. եթէ զայն մրոտուած կը գտնար, սակայն իրաւունք չունէր օտարի մը բերանով հայ յեղափոխութիւնը և յեղափոխականները մրոտել այն պիսի մրով մը որ, ուելի՛ի երեսին կը վայելէ։ Յամենայն դէպս Իսկէնտէրի այդ սուտ վարմունքը հայ հայրենասէրները այնչափ ալ չը պիտի վրդովէ. որովհետեւ Իսկէնտէր սուտով դրական փաստ մը տուաւ թէ ինք և իր նմանները երբէք չեն կրնար համակրիլ հայ յեղափոխութեան ու հայ ազատասիրական ձգտումներուն։ Ատով Իսկէնտէր ապացուցաւ որ ինք և իր նմանները, որքան ալ երկար ժամանակ ազգասիրութիւն ծախեն, օր մը չէ օր մը իրենց ներքին թուրք Հայը երեւան պիտի հանեն։

Ասանկ փաստերը մեր միամիտ ժողովրդին համար մեծ օգտակարութիւն ունին. ատ փաստերով է որ հայ ժողովուրդը պիտի համոզուի թէ՝ մենծ ազգանունը իր դատին միշտ և յաւիտեան վնասակար են. ու ինք, որչափ կարելի է, պիտի աշխատի Իսկէնտէրի նման մարդոցմէ հեռի մընալ։

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Կաթողիկոսը Երէցեան եպիսկոպոսի հրաժարումի լուրը լսելով՝ նոր նամակ մը գրած է պատրիարքին առաջարկելով որ Երէցեան եպիսկոպոսը համոզէ հրաժարականը ետ առնելու։

— Կաթուղիկոսի մասնաւոր հրամանով Թիֆլիսի թեմական վարչութիւնը շրջաբերականով մը քահանաներուն արգիլեր է հոգեհանգիստ կատարել օտարադաւաններուն համար։

— Դաւրիժի հայուհեաց միացեալ ընկերութիւնը մինչեւ հիմա 12 դպրոց բացեր է Ատրպատականի թեմին մէջ։

— Երէցեան անպայման կերպով կը հրաժարի Սսի կաթուղիկոսութենէն.

— Էջմիածնի պաշտօնաթերթ «Արարատ»ին խմբագրութիւնը յանձնուեր է ազատամիտ դպիր Գալուստ Տէր Մկրտիչեանին։

— Երեւանցի ներսէս Թայիրեանց մեռնելով մօտ 150 հազար ռուբլի կտակեր է Երեւանի հայոց թեմական դպրոցին և օրիորդաց Հռիփսիմեան վարժարանին. պայմանաւ որ այդ գումարին տոկոսով 5 որդեգիրներ ընդունուին նոյն վարժարանաց մէջ իր անունով։

— Պոլսոյ ուստրիական դեսպանը յայտարարած է որ Զուանգ տապանի կտակին համաձայն երկու հայ աղջիկներ, Աստրոհունգար հպատակ, 2.000ական ֆրանք տարեթոշակով եւրոպական բարձրագոյն վարժարաններ պիտի ղրկուին։ Տարեթոշակն առ առաւելն 5 տարի պիտի վճարուի։ Փափաքողները իրենց վերագիրներով մինչեւ յունիս 15 պիտի դիմեն Աւստրիական հիւպատոսարանին։

— Գերմանական Ռայխստագի անդամ Աւկուստ Պէբել «Դրօշակի» խմբագրութեան մէկ նամակին ի պատասխան կը հաստատէ որ ընկերվարական երեսփոխանները որոշած են Ռայխստակի առջեւ հրապարակ հանել Հայաստանի մէջ կատարուած դէպքերը։ Սակայն Պէբէլ կաւելցնէ և հեռաւելը.

«Գերմանիոյ մէջ հիմա ինքնաստ Հայաստանի քարոզութեան սկսիլը անհնարին է, որովհետեւ ընկերվարական կուսակցութեան ամբողջ ուշադրութիւնը, ամբողջ ուժն ու ժամանակը կեդրոնացած են ընդդէմ այն ճնշողական միջոցներու զոր գերման կառավարութիւնները կը ձեռնարկեն առեւտրական քաղաքական աշխարհին մէջ։ Ատոնք ամբողջովին կը կլանեն հանրային հետաքրքրութիւնը։»

— Ֆրանսական ազատական մամուլը շատ մեծ ոգեւորութեամբ խօսեցաւ Ատրիանու Պոլսոյ մէջ կախաղան հանուած Հայ և Պուլկար հերոսներու մասին։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Պոլսէն կը հաղորդեն որ գաղտնի ստիկանութիւնը Անկօլա գիւղին մէջ դատարութեան մը հետքեր գտած է, որուն մէջ կը մասնակցին թուրքեր և հայեր։

— Ծովային նախարար Հասան փաշա չորս տարուան մէջ մօտ 4 հարիւր միլիոն ֆրանգ ստացեր է պետական գանձարանէն, որուն ինչու վրայ ծախսուիլը յայտնի չէ։ Սակայն փաշա այդ մասին յայտնած է Սուլթանի և անոր արտաքսումը պահանջած. Սակայն Սուլթան մտիկ չէ ըրեր։

— Սուլթան իր ամենահաւատարիմ մարդոցմէ մին ղրկած է Եգիպտոս Խեդիվին օգնութեամբը հոն դտնուած վտանգաւոր երիտասարդ թուրքերն Պուլիս վերադառնալ համոզելու համար։

Կըսուի թէ Սուլթանի պատուիրակը յաջողեր է. համաձայնութիւն մէջ կըգտնուի նաև քորդ Պէտրիանը։

— Հարբած թուրք սպայ մը որով յարձակում գործեր է ֆրանսական դեսպանատան ղինուորական կցորդին վրայ, որ կարքով կերթայ եղեր։

Թուրք սպան ձերբակալուած է։ Ֆրանսացի ոստիկան մը չէ հասեր։

— Վաշինկտնի մէջ շատ բարկացած են Թուրքիոյ դէմ Միսս Սթոնի խնդրոյն պատճառաւ։

Մտադիր են ճնշում գործադրել Սուլթանի վրայ։

—o—

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Երեսփոխանական ընտրութիւնները տեղի պիտի ունենան փետրուար 17ին. բոլոր կուսակցութեանց պետերը և կարեւոր անդամները ճամբորդութիւններ կը կատարեն երկրին մէջ իրենց ծրագիրները ժողովրդին պարզելու համար։ Ամէնքն ալ եռանդուն գործունէութեան մէջ են։ Յարուցնակ կուսակցական և ընդհանուր հաւաքումներ տեղի կունենան։

— Ապաննուած կրթական նախարար Վասիլ Ինչէվի թաղումը կատարուեր է կառավարութեան հաշուով և մեծ շքով։

Ամբողջ պուլկար ժողովուրդը չափազանց յուզուած է Երիտասարդ նախարարին մահովը։

ՌՈՒՍԻԱ

Հատ մը լեհական քաղաքներու մէջ լեհ աշակերտները չեն ուզեր կրօնքը ռուս լեզուով սովրիլ. խռովութիւններ տեղի ունեցած են։

Այն ամէն դպրոցները ուր խռովութիւններ տեղի ունեցեր են, կրթական նախարարի հրամանով գոցուած են։

— Ռումէն կառավարութիւնը խիստ միջոցներ ձեռք առած է ռուսական ոստիմանագլխէն, Ունկէնի, անցնողներու հանդէպ։

ՖՐԱՆՍԱ

Բարիզի մէջ յանձնաժողով մը կազմուեր է Կարէպալտիի համար մահարձան մը կանգնեցնելու համար։

— Մարսէյլի մաքսատան մէջ մեծ գողութիւններ կատարուեր են պաշտօնեաներու ձեռքով։ Արդէն մէկ քանին ձերբակալուած են։ Երկու յանցաւորներ փախեր են։

ԻՏԱԼԻԱ

Եւրոպական թերթերը կը գրեն որ Իտալիա և Անգլիա դաշնակցութիւն կազմեր են։

— Երեսփոխանական ժողովը. որ փետրվար 15ին պիտի բացուէր դեռ չէ բացուած. որովհետեւ թագաւորը դեռ հրամանը չէ ստորագրած, յայտարարելով որ աւելորդ կը համարէ գահական ճառով մը ժողովը բանալ. քանի որ չի կատարուիր ոչ գահական ճառին մէջ և ոչ անոր պատասխանին մէջ խոստացուածները։

— Թարապուլուզէն կը հաղորդեն որ մօտերս անգլիական չորս զրահաւորներ պիտի Պէնկազի գան. արտաքին գործոց նախարարը երկար ու բարակ տեսակցութիւն ունեցեր է թրքական դեսպանին հետ Թարապլուզի խնդրի մասին։

Միջերկրականի նաւատորմիղին հրամայուած է պատրաստգտնուիլ Թարապլուզ երթալու երթալու համար, որովհետեւ իրերու կացութիւնը այնչափ խախտեցուցիչ չի նկատուիր։

—o—

ԱՄԵՐԻԿԱ

Վաշինկթնէն կը հաղորդեն թէ անիշխանականներու դէմ ծրագրուած օրէնքը՝ որ մօտերս պիտի ներկայացուի երեսփոխանական ժողովին, յօդուած մը կըպարունակէ որով կը պաշտպանուին նաև Միացեալ Նահանգներու մէջ գտնուած օտար պետութեանց ներկայացուցիչները։

Այդ օրէնքով յանցաւորը մահուան պիտի պատապարուի, եթէ օտար ներկայացուցիչ մը սպաննուի։

—o—

ՉԻՆԱՍՏԱՆ

Անգլիոյ, Ճաբոնի Ամերիկայի դեսպանները միասին բողոքած են Ռուսիոյ և Չինաստանի միջև Մանչուրիոյ վերաբերեալ եղած դաշնագրութեան դէմ. այդ միջամտութեան շնորհիւ դաշնագրութեան կնքումը կրկին յետաձգուած է։

Դիէնձինի կառավարիչը որոշեր է ազատական լրագիր մը հիմնել. մտադիր է նաև քանի մը հարիւր երիտասարդ չինացիներ զրկել Ճաբոն ուսում առնելու համար։

— Անգլիա հրաժարած է վէյխավէյը ամրացնելու միքէն։

ԹՐԱՆՍՎԱԼ

Եւրոպիոյ մէջ գտնուած Թրանսվալի բոլոր ներկայացուցիչները հաւաքուեր են Քրիւկէրի քով, Ուիթրէխթ, Անգլիոյ Հոլանտական կառավարութեան տուած պատասխանի մասին խորհրդակցելու համար։

— —

ԱՆԳԼԻԱ

Յայտնուեր է որ Թրանսվալի պատերազմին համար ձիեր գնող պաշտօնեաները ահագին գողութիւններ ըրեր են։

— Լօնտրայի մէջ ահագին միթինկ մը տեղի ունեցեր է որով բողոքեր են ճիզուիթներուն Անգլիա հաւաքուելուն դէմ։

—o—

ԹԱՐԱՊԼՈՒԶԷՆ

Հին Հնչակեանը կը հաղորդէ. անգլիական զրահաւորները երեք օր հոս կենալէ վերջ՝ մեկնեցան։ Շոգենաւը մեկնելիք օրը զրահաւորներուն հրամանատարը մակոյկով նաւահանգիստը մտնելու ժամանակ ծովի այեկոծուած ըլլալուն պատճառով քիչ մնաց խըզդուէր։ Մակոյկը կը շրջի, հրամանատարը ծովուն մէջ կիյնայ. մեծ դժուարութեամբ զինքը կազատեն։

Տաճիկը տեսնելով որ Թրապըլուզը ձեռքէն պիտի երթայ ուզեց կամովին Անգլիոյ յանձնել՝ բայց չը գիտենք ինչ պատճառաւ էր որ անգլիական զրահաւորները ետ դարձան։

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Փիլիպէի «Հայկական երգեցիկ խումբը» աս շրջանին մէջ վերակսած ըլլալով արդէն իր պարապմունքները, ձեռնարկած է նաեւ պարբերաբար հրատարակելու եւրոպական ձայնագրութեամբ հայկական հին եւ նոր քառաձայն երգեր, մաքուր թղթի վրայ, յստակ վիմագիր։

Այս առթիւ երգեցիկ խումբի վարչութիւնը-Նորկայիս կը յայտնէ Պուլկարիոյ և արտասահմանի երաժշտասէր հայ երիտասարդութեան, որ եթէ ատ երգերէն փափագողներ կան. հաճին դիմել վարը նշանակուած հասցէին՝ վճարելով «մէկ թուղթին» համար 20 սանթիմ. փոստի ծախսը մեր վրայ։ Կան երգեր որոնք մէկէ աւելի թուղթերէ կը բաղկանան։

Արտասահմանի համար 35 սանթ.

Փիլիպէ վարչ. «Հայկ. երգեցիկ խումբի»։

Հասցէ՝ Agop Sivadjian Philippople

ԳՈՒԹԱՆ

Հանդէս ամսեայ, հողագործական, գիտական եւ արուեստագիտական

Հիմնադիր տնօրէն

Գարեգին Յ. Մեծատուրեան

Հրատարակուած է Դ. տարի թիւը, շահեկան բովանդակութեամբ։

Տարեկան բաժնեգինն 12 ֆր. դիմել հիմնադրին, 23 rue de la Collegiale

L'EUROPEEN

—o—

Շաբաթաթերթ քաղաքական, միջազգային իրաւունքի, ընկերական հարցերու, գրական եւ դեղարուեստական։

Տարեկան 15 ֆր.

Վեցամսեայ 8 ֆր.

Հասցէ 24 rue Dauphine Paris VI

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՀԱՐԺՈՒՄԱ»

Կը տպագրուին ամէն լեզուէ այբեւտոմս, հասցէտոմս, նամակագլուխ, հարսանեկան հրաւիրագիր, մահազդ։

Գիները յոյժ դիւրամատչելի։

Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգութեամբ և փութով կը կատարուին։

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԽԻ՝

ԵՒՐՈՊԱՑԻ ՀԱՑ ՈՒՍ. ՄԻՈՒԹԻՒՆ

Եւրոպայի Հայ. Ուս Միութեան նամակ ուղարկելու եւ առհասարակ ամէն տեսակ դիմում ընելու համար պէտք է դիմել հետեւեալ հասցէով

Բնիոն տի Զէդիւտիան Արմ.

Լէորոք տրիւ տը Լէիոլ տը Շիմի 2

Սուխ Ժընէվ

Կարգադիր Յանձնաժողով

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

—o—

Հայ լրագիրների բոլոր խմբագիրներից խնդրվում է իրենց թերթերից մի մի օրինակ զրկել հետեւեալ հասցէով.

Կ. Արաբեանց Ճիպուղի (Մէր Ռուժ). բաժանորդագինը կուղարկուի հէնց որ առաջին համարները սաացվին։

Կ. Արաբեանց։

Отговорникъ :

Мурадъ-Ераносянъ

Печ. Взаимность" — Варна